

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 հունվարի 2019 թվականի N 01-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՏԱՇՏՈՒՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ԵՎ «ԼԻՃՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ ՈՒ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԸ, ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ «ԼԻՃՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-66-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-248 օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի դ) և զ) կետերով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 11.3 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաշտունի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպելու գույք հետ վերցնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1247-Ն որոշումը՝

որոշում եմ.

1. Հաստատել «Տաշտուն հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Լիճք միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջև կնքված միացման պայմանագիրը:
2. «Տաշտունի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ճանապարհով վերակազմակերպել «Լիճքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության:
3. Հաստատել «Տաշտունի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների

«Լիճքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը:

4. Հաստատել «Տաշտունի հիմնական դպրոց» և «Լիճքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպման հետևյալ կարգն ու պայմանները.


Միացման ճանապարհով վերակազմակերպված «Տաշտունի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության դադարման պետական գրանցումից հետո մեկամսյա ժամկետում «Լիճքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից կազմված և կազմակերպության հիմնադիր հանդիսացող պետական կառավարման լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի որոշմամբ հաստատված փոխանցման ակտի համաձայն «Լիճքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն ընդունում է, իսկ «Տաշտունի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հանձնում է առկա հիմնական (սեփականության իրավունքով պատկանող) և շրջանառու միջոցները, դրամական մնացորդները, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, հաշվարկները:

«Տաշտունի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպված է համարվում նրա գործունեության դադարեցման մասին պետական գրանցամատյանում գրառման պահից:

5. Հաստատել «Լիճքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը.

Հանձնարարել տնօրեն Է.Պողոսյանին վերակազմակերպման արդյունքում «Լիճքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին 10 օրյա ժամկետում այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստր «Տաշտունի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության դադարման պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

 Է. ՊՈՂՈՍՅԱՆ

2019թ. հունվարի 11
ք. Կապան

